ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, Էլ. հասցե foi@foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

10.04.2013թ.
197-ի 7

ՀՀ արդարադատության նախարար
պարոն Հրայր Թովմասյանին

Տեղեկատվություն ստանալու կրկնակի հարցում

Հարգելի պարոն Թովմասյան,

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը 2013թ.-ի հունվարի 26-ին տեղեկություն ստանալու գրավոր հարցմամբ դիմել է ՀՀ արդարադատության նախարարությանը եւ խնդրել է տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. Ստացե՞լ են արդյոք պարգեւատրումներ (պարգեւավճարներ, նվերներ) ՀՀ արդարադատության նախարարության աշխատակիցները 2012թ.-ին,
2. Եթե այո, ապա ըստ հաստիքների ովքե՞ր են պարգեւատրվել եւ ինչքա՞ն գումարով (ի՞նչ նվերով),
3. Որքա՞ն է կազմել ՀՀ արդարադատության նախարարության աշխատակիցների ստացած դրամական պարգեւատրումների ընդհանուր գումարը,
4. Ընդհանուր քանի՞ աշխատակից է պարգեւատրում ստացել:

Նախարարությունը ԻԱԿ-ի հարցմանը պատասխանել է, սակայն մերժել է տրամադրել տեղեկություն, թե ըստ հաստիքների ովքե՞ր են պարգեւատրվել եւ ինչքա՞ն գումարով (ի՞նչ նվերով)՝ 2-րդ հարցի պատասխանը՝ պատճառաբանելով, որ պարգևատրված անձանց անվանական տվյալներ չեն կարող տրամադրել: Նշենք, որ ԻԱԿ-ը խնդրել է նախարարության աշխատակիցների ստացած պարգևատրումների չափի մասին տեղեկություններ ըստ հաստիքների, այլ ոչ անվանական:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ եւս մեկ անգամ խնդրում ենք տրամադրել բաց թողնված վերոնշյալ տեղեկությունները (հարցման 2-րդ հարցի պատասխանը):

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ իրավաբան Գեւորգ Հայրապետյան